մունք: Եկեղեցիներում ժամերգութիւնը այնպէս էր կատարվում, որ Աւետարանը կարդացվում էր լուռարէն կամ ասորերէն լեզուներով, եւ հալ ժողովուրդը, որ ամենեին չէր հասկանում այդ լեզուները, նոր կրօնի պաշտամունքը տեսնելով, ժամակարգութիւնը լսելով՝ ուրիշ ոչ մի զգացում չէր կարող դուրս բերել եկեղեցուց, բացի այն մտքից, թէ ինչո՞վ է Քրիստոս բարձր իր նախկին հզօր, աստուածների հալը, հալ աշխարհի պահապան Արամազդից. ինչ առաւելութիւն ունի իր առաջ դրված խաչը՝ իր նախկին Անահիտ տիկնոջ ոսկեղէն սիրուն արձանից, որին տարեկան հանդէսների ժամանակ այնպիսի հրճուանքով դարդարում էին վարդի պսակներով եւ զօհեր էին մատուցանում. ինչո՞վ լաւ է այդ օտարաձայն քրթմնջոցը, որ այնքան ձանձրալի կերպով զօղանջում է իրանց ականջներում, քան այն գեղեցիկ հալերէն երգերը, որոնցով դովում էին քաջ Ահազգնին, ոսկեծղի Անահիտին եւ նրանց շնորհքները հայցում:—Նոր կրօնը, չը կրթելով ժողովուրդի հոգին, օտար մնալով նրա սրտին՝ այնու ամենայնիւ ստեղծեց մի նոր՝ հոգեորական դասակարգ, որ բարեպաշտ թագաւորների առատ նուէրներով անազին հողալին կալուածների ու հարստութիւնների տէր դարձաւ եւ մեծամեծ արտօնութիւններ ստացաւ: Այս դասակարգի գլխաւորները ձգտեցան նաև քաղաքական իշխանութիւն ձեռք բերելու, թագաւորներին իրանց հպատակեցնելու. ինչեղով աւելի կրթված ու բարեպաշտ նրանք չիրաւի մեծ ազդեցութիւն ձեռք բերին. թագաւորների մօտ խորհրդատուի, մենտորի դեր էին կատարում. նրանց ու նախարարների լարարերութեան մէջ՝ միջնորդ էին դառնում. նրանց և օտար պետերի մէջ՝ դիսպան ու միջնորդ հանդիսանում: Թուլ թագաւորներն ուղղակի ենթարկված էին նրանց ազդեցութեան ու նրանց կամքովէ էին շարվում. իսկ եռանդուն թագաւորներն աշխատում էին թօթափել իրանց վրայից նրանց սզդեցութիւնը, եւ սկսվում էր երբեմն խուլ պայքար, երբեմն լաւտնի թշնամութիւն այս երկու իշխանութիւնների մէջ: Ամբողջ հարիւր տարվայ ընթացքում չէ կղել ոչ մի կաթողիկոս, որ ենթարկված չը լինի բռնութիւնների (սկսելով հալածանքից մինչեւ սպանութիւն)՝ ժողովրդի իշխանների կամ թագաւորների կողմից, բացի վերջին մի քանի աննշան եւ սակաւակեաց կաթողիկոսներից, որոնք եղել էին «տորուկ ՚ի ստրկած արքունի»:

Արա հետ միասին քրիստոնէութիւնը Հալաստանում այս ժա-

մանակամիջոցում առաջ բերեց մի նոր, քաղաքական և կուլտուրական տեսակետից վտանգաւոր դրութիւն: Քրիստոնէութեան շնորհիւ հայերը կրօնապէս հեռացան պարսիկներից եւ մօտեցան չոյներին: Սասանեան պարսիկ թագաւորները, առանց այն էլ կրօնամոլ, այս փոփոխութիւնը նկատեցին իբրև մի շատ վտանգաւոր իրողութիւն Պարսկաստանի շահերի համար, որովհետև կրօնական միութեան շնորհիւ հայերը քաղաքականապէս էլ մօտենում էին Յուժաստանին. իսկ հայերի միանալը չոյների հետ՝ շատ կարևոր, գուցէ եւ վճռական նշանակութիւն ունենար այս երկու մեծ պետութիւնները դարաւոր մրցութեան լուծման համար: Ուստի Սասանեան թագաւորները թշնամաբար սկսեցին նայել ոչ միայն քրիստոնէութեան, այլ և այդ կրօնը դաւանող ազգի ու թագաւորի վրա: Քրիստոնէութեան շնորհիւ Հայաստանը վաստակեց մը անհաշտ ու հզօր թշնամի, որ շատ շուտով վերջ դրեց նրա քաղաքական ինքնուրոյնութեան արտաքին մնացորդին (Արշակունիների թագաւորութեան) եւ վճռաբար ձեռնարկեց քրիստոնէութիւնը բնաջինջ անելու Հայաստանից: Իսկ չոյները, իրանց կողմից, ամենևին հոգ չը տարան օգտվելու սրանց համար նպաստաւոր դրութիւնից — օգնութեան ձեռք չը մեկնեցին հայերին (քաղաքական շահերը սլապէս էին հասկանում նրանք), և միեւնոյն ժամանակ աշխատում էին լուծացնել իրանց բաժինը ընկած Հայաստանը, որի համար, ի միջի այլոց, շատ արմար միջոցներ էին լուծարէն լեզուով հալոց եկեղեցիներում պաշտամունք կատարելը եւ հալոց կաթողիկոսների՝ չոյն սետրապոլիտներից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալը: Քաղաքակրթութեամբ էլ Հայաստանը այն ժամանակ, ինչպէս և միշտ, ենթարկված էր դրացի աւելի քաղաքակիրթ եւ հզօր ազգերի ազդեցութեանը: Սանաւանդ մեծ էր Պարսկաստանի, մեր դարաւոր և արիւնակից հարևանի ազդեցութիւնը, որի մէջ ընկղմված էր հայութիւնը խորապէս:— Պաշտօնական գրադրութիւնները, կալուածական, տոհմական գոկումենտները եւ առհասարակ որեւէ գրագրութիւն՝ գրվում էին պարսկերէն: Պալատի խօսակցութեան լեզուն պարսկերէն էր. քաղաքների, թագաւորների անունները՝ պարսկերէն. պետական կաղմը, զինորական, դատաստանական կարգերն ու կազմակերպութիւնը՝ պարսկական. զէնքերը, զգեստները, կերակուրները, կահկարասիքը, արհեստները, հաւատալիքները, ծէսէրը... բոլորը պարսկական: Սրան անհերքելի ապացոյց է մէր հինգերորդ դարի լեզուի բառարանը, որի մէջ հազարաւոր ամենագործածական

բառեր, կեանքի բոլոր երևութներին վերաբերեալ, պարսկերէն են և ցոյց են տալիս, թէ սրտեղից են մտել մեր մէջ այդ բառերով նշանակվող առարկաներն ու հասկացողութիւնները.— Այս հետաքրքրական, դեռ չը մշակված հարցը արժանի է առանձին ուսումնասիրութեան:

Այսպէս ուրեմն հինգերորդ դարի սկզբին Հայաստանը թէ քաղաքականապէս եւ թէ կուլտուրապէս կարգնած էր կորստեան վիճի ասիին. քրիստոնէութիւնը չէր պաշտպանում ազդացնութիւնը, չէր կրթում հոգին, այլ աւելի օտարացնում էր նրան, աւելի մօտեցնում օրհասական անկումը: Առանց չափազանցութեան կարելի է ասել, որ եթէ այս դրութիւնը երկու դար էլ շարունակվէր՝ Արաբիայի անապատներից փոթորկված մահմեդական յոր կրօնը ամենից առաջ կը տապալէր հայութիւնը, եւ այսօր ոչ հայ եւ ոչ հայի լիշատակ կը մնար աշխարհիս երեսին, այլ մահմեդական պարսիկներ և մասամբ քրիստոնեալ չոյներ, որոնք իրանց ծագումն էլ վաղուց մոռացված կը լինէին:

Ս. Մ.

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ

Ս. Մեսրոպը Տարօն Գուլառի Հացիկ գիւղից էր: Ներսէս Մեծին աշակերտելով ուսումնասիրեց չոյն, ասորի, պարսիկ լեզուները և ապա դիւանապետի պաշտօնով արքունիք մտաւ: Ծուտով արքունիքից հեռացաւ Աւետարանը քարոզելու Հայաստանի այն կողմերը, որտեղ քրիստոնէութիւնը չէր արմատացած: Այդ ժամանակ հալոց եկեղեցիներում, Ս. գրքերը ասորերէն կամ լուծարէն էին կարդում և ապա հայերէն թարգմանում, որ ժողովուրդը հասկանար: Ս. Մեսրոպը մտածեց հնարել հայերէն տառեր. իւր այս միտքը լալանեց իւր ժամանակի կաթողիկոս Ս. Սահակին և Վռամ—Շապուհ թագաւորին: Երկուսից էլ աջակցութիւն գտնելով, Ս. Մեսրոպը դիմեց շատ փիլիսոփաների և ճարտասանների, բայց ոչ ոքից օգնութիւն չգտաւ: Ինքը աղօթքով ապաւինեց Աստծուն և հասաւ իւր բողոքանքին. գտաւ հայերէն գրերը 406 թ. ապա Ս. Սահակի հետ մանուկներ հաւաքեցին, ուսումնարաններ բացին և թարգմանեցին Աստուածաշունչ՝ Ս. գիրքը: Ս. Մեսրոպը կանոնաւորեց և հալոց ծիսարանը մաշտոցը, որ և ինքը կոչուեցաւ Մաշտոց: Գտաւ տառեր և վրացոց և աղանաների համար: Վախճանուեցաւ 441 թ. և թագուեց Օշական գիւղում Վահան Ամատունու ձեռքով:

IV Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՆԻՊՆՈՍՏԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ՏԵԼԵՊՐԱՏԻ ԿԱՄ ՄՏՔԻ ՓՈՒԱՆԱԿՈՒՄ ԵՒ ՊԱՅԾԱՌՍՏԵՍՈՒԹԻՒՆ

Ով կամենում է դիտենալ, կամենում է գործել, և ով կարող է հարց տալ և պատասխանել, նա է միայն իսկական ուսումնասիրողը:

ՎԵԼՏՄԵՐ

Տելեպատին հոգեկան ընդունակութիւններն՝ ակնյայտնի՝ մի երևութ է: Երբոր իդէաներ, խորհուրդներ և չուզումներ բուն գործունէութեամբ մի մտքից դուրսն ընկնում և ընդունուում մէկ ուրիշ տպաւորուող և զգալի մտքի մէջ, դա տելեպատի է: Արժուն ժամանակ, թէ քնոյ մէջ, դա միևնույն է:

Մեր միտքը մտածում է, իսկ բառերը, որպէս մտքի սալ, նրա մտածածը փոխադրում են դուրս և տալիս ուրիշին ուրիշ խօսքով՝ բառերն արտայայտում են միայն մեր մտքի խորհուրդները:

Երկու հոգի միմիեանց հետ խօսում են, մէկը խօսում է, միւրը լսում. քայքայ եթէ լսողի միտքը զբաղուած (կենդանացած) է բոլորովին ուրիշ հարցով, նա մինչև անգամ չի էլ կարող լինել, թէ իւր ընկերը խօսում էր կամ ինչի մասին էր նա խօսում. ինչու, որովհետև նրա միտքը զբաղուած էր ուրիշ հարցով: Այս օրինակը բաւական պարզ ցոյց է տալիս, որ մենք ոչ թէ հինգ, այլ վեց զգայարանք ունինք, և այդ վեցերորդը միտքն է, զգայարաններից ամենից զօրեղը: Եթէ միտքը կրճատուած է, թէ աչքերը չեն սեղանում, հետևանքն իսկապէս այն կըլինի, որ նա տեսողութեան զգայարանը (աչքը) չի տեսնիլ. և թէ միտքը կրճատուած է, թէ ձեռքը անզգայացել է, իսկապէս ձեռքը կըզգարի գործելուց և այլն: Այդ երևութը մենք հիպնոտիսմի մէջ հանդիպում ենք ամենայն օր: Ես հիպնոտացրել եմ հարիւրաւոր առողջ և հիւանդ մարդկանց և այդ փորձերը կատարել եմ: Միանգամ ես հիպնոտացնելով պ. Թ. Մանթ. ին,

աւժեղ կերպով նրա մտքում տպաւորում եմ, որ զարթելուց մի րոպէ յետոյ աչքերը չեն տեսնելու, ականջները չեն լսելու, կամ ատամը սաստիկ ցաւելու է և այլն. նա զարթնում է և իսկապէս մի րոպէ յետոյ նրա աչքերը չեն տեսնում, ականջները չեն լսում և ատամը ցաւում է:

Յետոյ, որ մեր «մտքի աչքը» շատ աւելի ուժեղ և շատ աւելի հեռու է տեսնում քան մեր «չքը», ես իրականութիւն է. մեր աչքը կարող է տեսնել միայն մի որոշ հեռաւորութիւն, քայքայ մեր (մտքի աչքի) տեսողութիւնը անսահման է, նա մի ակնթարթում կարող է հազարաւոր մղոններ հեռուն տեսնել: Մի րոպէ փակեցէք ձեր աչքերը և ձեզ ծանօթ մի հեռաւոր քաղաք ուղեցէք տեսնել, և արդէն մի վայրկեանում դուք այնտեղ էք, այնտեղ դուք կըհանդիպէք ծանօթներին, բարեկամներին և այլն: Ապա եթէ մեր մտքի աչքը ընդունակ է տեսնել իրեն ծանօթ հեռաւոր վայրեր, ուրեմն եթէ մենք մշակենք նրան, նա նոյնպէս կարող կըլինի տեսնել իրեն անծանօթ վայրեր և դէմքեր: Դիմենք գործնական օրինակի:

Հիպնոտիսմի մէջ կայ մի Ֆենոմենա պալժառատեսութիւն (clairvoyance) անունով: Ենթական այդ դրութեան մէջ տեսնում է իրեն ծանօթ և անծանօթ երկիրներ, քաղաքներ, մարդիկ, գտնում կորած առարկաներ, լուծում դժուար խնդիրներ, հիւանդութեան դիագնոզն իմանում և զարմանն առում, մինչև անգամ մարդու ապագան գուշակում: Ես հիպնոտացնում եմ պ. Ջումշուդ Գալստեանին առաջին անգամ սեպտ 20-ին և շարունակաբար մի քանի անգամ և վարժեցնում նրա միտքը «պալժառատեսութեան» սկզբի սէանսներում նա խառնում էր, իսկ այժմ նա այնքան վարժ է, որ շատ քիչ սխալներ է անում: Նա, որ իւր կեանքումը ոչ Նիւ-Յօրկումն է եղել և ոչ էլ այդ քաղաքի անունը լսել, նկարագրեց ինքն այդ քաղաքի բոլոր գլխաւոր փողոցները, մանաւանդ փողոցներից մինը շատ կենդանի գոյներով նկարագրեց, նույնպէս քաղաքային երկաթուղին, երկաթորական տրամվայներ և այլն նոյն սենեակում, ուր հիպնոտացրել եմ նրան, պատահել է, որ եղել են հիւրեր նա իւր աչքերը փակ, քնած՝ մի առ մի թռեց, թէ ովքեր կան սենեակում, ով ինչ է անում, ուր է նստած, և ինչ ունի ձեռքում բռնած:

Պր. Գ. Ն.-ին մի անգամ հիպնոտացնելով Կասում եմ նորան, որ նա կարող է ամբողջ աշխարհը ման գալ, իւր ուզած տեղերը,

եւ մարդկանց տեսնել եւ տասը բողոք լեռնոյ զարթել, մի ամամանակ ներշնչուած եմ, որ զարթնելիս պիտի լինէ: Ես թողնում եմ նրան եւ սենեակից դուրս գալիս. դռնից նկատում ենք, որ նա լաց է լինում, ապա միմիկան փոխում է մի քանի անգամ և ճիշտ տասը բողոքն լրացած ժամանակ, զարթնում ու պատմում, թէ ինքը գնացել էր, ՚ի միջի ալըոց, իւր հայրենի գիւղը, աջտեղ տեսել էր հօրը (պարոնի հայրը Պ. քաղաքումն էր և վեց ամիս էր, որ նրանից ոչ մի տեղեկութիւն չուներ): հայրը լալտնել է, որ ինքը մի ամիս է, որ թողել է Պ. քաղաքը եւ գիւղումն է և թէ Պ. Գ. Ե.-ի սեծ մալըը վախճանուել է, եւ դրա համար էր նա լաց լինում: Այդ փորձից մի շաբաթ լեռնոյ նա նամակ ստացաւ Պ. քաղաքից, իւր հօրեղբորից, որից իմացուեց, որ իսկապէս հայրը երեք ամսից ՚ի վեր է որ գիւղումն է:

Մէկ ուրիշ հետաքրքրական փորձ եւս կատարում եմ պ. Գ. Ե.-ի վրա — իպնոտացած գրութեան մէջ ներշնչում եմ նրան մտեանալ սեղանին եւ վերցնել սեղանի վրայ դրուած իւր կիսատ թողած վէպիկը եւ գրել նրա շարունակութիւնը: Նա ինքնավստահ կերպով մօտենում է սեղանին. վեր առնում մատիտը եւ գրում: Առաջն էջի տողերը նա չկարողացաւ ուղիղ պահել բաց կարդացում էր մաքուր, երկրորդ էջի տողերը նա պահեց աւելի ուղիղ, առանց տառասխալի, բոլոր կէտերը՝ ստորակետները, չսկերտներն իրենց պատշաճ տեղերում դրուած. իսկ զրաժը ճիշտ եւ ճիշտ իւր վէպիկի շարունակութիւնն էր. սենեակը մութ էր եւ աչքերը փակուած ՚իսկ զարթնելիս ոչինչ չէր լինում եւ զարմանում իւր գրածի վրայ:

Մտքի պաշտառատեութիւնը (clairvoyance) իրականութիւն է: Ես չեմ խօսում ինչ որ միայն կարգացել եւ տեսել եմ ալ խօսում եմ, ինչ որ գիտեմ. ինչ որ ինքս անձամբ փորձել եմ:

Ասեն մի պատահած ենթակալ, «պաշտառատես» չէ, կամ գոնէ լաւ պաշտառատես է մենք շատերի վրա ենք փարձում եւ նրանցից ընտրութիւն կատարում, իսկ մեր ընտրածին տակաւին մենք մշակում ենք. աչսինքն ամենայն օր հիպնոսացնելով նրա մտքը մշակում, զարգացնում ենք: Մտքի ալդ բարձրութեան հասնելու համար երբեմն ամիսներով մենք փորձեր ենք կատարում: Այդպէս ենք վարում և տեխպատիական հաղորդակցութիւն կատարելու համար: Երկու մտքեր, որոնք ուզում են չարաբերութեան մէջ մտ-

նել հեռաւորութեան վրա, նախապէս պիտի վարժեցնեն, մշակեն իրենց միտքն ալդ նպատակի համար, որը գուցէ նրանցից վերցնէ ամիսներ, տարիներ: Բայց երբ միանգամ կըմշակուէ ալդ ուժը երկուսի մէջ, աչն ժամանակ, եթէ նրանցից մէկը նստի կառքի մէջ, իսկ միւսը կառապանի դեր կատարի, վերջինս կառքը կառաջնորդէ աչն կողմը, ուր կհրամայէ մտքով կառքում նստողը:

Յետոյ եւ աչն էլ ճիշտ է, որ բոլոր մարդիկ միեւնոյն տեսակ չեն լսում, օր. ոմանք լսում են որոշ ձայներ եւ նրանց ականջները խուլ են միւս ձայների համար նոյնպէս ամեն օր միեւնոյն կերպով չի տեսնում, ոմանք նշմարում են գոյները, իսկ ոմանք չեն կարող մինչև իսկ երկու գոյների տարբերութիւնները իմանալ, կամ միայն կարող են ջոկել ուժեղ գոյները, չեն կարող նշմարել երանդների նրբութիւնները: Այսպէս էլ կան մարդիկ, որ չեն կարող ընդունել մտաւոր տպաւորումներ:

Մի միտք պէտք է լինի արտաձգելու հարկ եղած գրութեան մէջ, իսկ մէկ ուրիշ միտք պէտք է լինի բաւականաչափ զգալուն առաջինի արտաձգածն ընդունելու: Եթէ մէկը կըլինի դրական եւ միւսը ընդունող կամ կրաւորական գրութեան մէջ, գրական մտքի մտածածը կը տեղաւորուի ընդունող մտքի մէջ եւ առանց մտքերի աչս համաձայնութեան, տեխպատիկան հաղորդակցութիւն բացարձակապէս անկարելի է:

Մեր ոչ-կամաւոր (ընդունող) միտքը հաղորդակցելու ոյժ ունի մէկ ուրիշ ոչ կամաւոր մտքի հետ, օրինակ՝ մեր քնած ժամանակը, մեր երազում: Բայց ինչ է երազը:

Երբ որ քնած ենք լինում, մեր ոչ-կամաւոր (ընդունող) միտքը գործում է եւ որպէս պահապան հսկում մեր մարմնին: Նա երբեմն գործում է առողջ, երբմն անկանոն, և ի հարկէ անկանոն գործունէութիւնը առաջանում է անկանոն կեանքից, սնունդից եւ ալլն, Նոյնը պատահում է եւ մեր զարթոււն գրութեան մէջ. երբեմն մեր միտքը մտածում է առողջ եւ խելօք կարգադրութիւններ անում, երբեմն էլ մտածում է հիւանդ եւ անպէտք կարգադրութիւններ անում. նոյնն է եւ մեր երազներում: Այսպէս մէկ ոչ-կամաւոր միտք, մէկ ուրիշ ոչ-կամաւոր մտքի հետ քնած ժամանակ (երազում) կարող են հաղորդակցութեան մտնել:

Հետեւեալն ենք կարդում (the Phrenological Magazine)-ի № 280 ապրիլ 1890 թ. մէջ «Միրելի բարեկամ: Այս գիշեր ժամը չոր-

սից քիչ առաջ ես զարթնեցի մեծ սարսափով մտքի անհանգստութեամբ և վշտերով լի տեսածս երազի ազդեցութեան տակ, իմ մարմինս դողում էր և պատած էր սառը քրտինքով: Ես ման էի դալիս իմ փոքր որդուս, որը հինգուկէս տարեկան էր, և երկու բարեկամներն հետ: Սաստիկ անձրևի բռնուեցինք և ապաստարան գտնելու համար մտանք ուր-մուր փողոցներ: Ես կորցրի իմ երկու բարեկամներս, որոնք ճեղքելով բազմութիւնը անցել էին դիմացի սալալատակի վրայ, որ ես չէի նկատել: Իմ որդին նշմարելով նըրանց, բաց թողեց ձեռքս և մտաւ բազմութեան մէջ նրանց մօտ գնալու համար: Ես խառնեցի այդ լաբիրէնթոսային փողոցները և զարձուածքները և արագութեամբ բռնեցի այդ փողոցներից մին, որը գէպի վեր էր բարձրանում, վերևից ներքև ամեն կողմ աչք նետեցի, բաց չկարողացաւ տեսնել իմ որդուն: Այդ տեղերն ինձ անձանօթ էին. վաղեցի ներքև բազմութեան մէջ, բարձր ձայնով ես լաց էի լինում և իմ որդու անունը տալիս, երբ որ զարթնեցի: Զարթնելով հանգստացաւ շնորհակալ սրտով, որ երազ էր այդ բոլորը: Դեռ արթուն էի, երբ հարևան սենեակից լսեցի մի սարսափելի լացի ձայն. այնպիսի աղաղակ եր, որ չէր կարելի անուշադիր թողնել: Այդ ձայնը գալիս էր միևնոյն երեխայից և սաստիկ ներգործեց ինձ վրայ. իսկոյն ես գնացի նրա մօտ. իմ ձայնս հանգստացրեց նրան. «ես կարծում էի, թէ կորած եմ», այս միայն նա կարողացաւ ասել, և անտարակոյս նա իսկոյն խաղաղեցաւ և դարձեալ քնեց: Այդ զուգադիպութիւնը ինձ համար պարզ էր: Առաւօտեան նախաձային երեխան պատմեց իւր երազը, թէ ինքը ինձ հետ ման էր գալիս և կսրաւ: Աջգլխի բաների ես միայն գրքերից էի ծանօթ: Գ. Կոքն»

Երկու օր առաջ, հիպնոսացնելով պ. Ս. Ֆրէնդեանցին պահանջում եմ նրանից «կարդալ իմ միտքը» և կրկնել, ինչ որ ես մտքումս մտածում եմ. նա լարում է ականջները (կարծես ուղում է լսել) և բառ առ բառ կրկնում մտքս մտածածը: Սա առաջին փորձ էր. մշակելով նրա միտքը, ժամանակի ընթացքում, մենք հեռաւորութեան վրայ, օրուայ, մի որոշ ժամում կարող ենք տեղեկատրական կանոնաւոր հաղորդակցութիւն ունենալ:

Երեկ գիշեր ինձ մօտ գալիս են հիւրեր և խնդրում, որ մի քանի հիպնոսական փորձեր անում: Հիպնոսացնում եմ պ. Գ. Ն.-ին եւ նրան ասում, որ գնա Լոնդոն Եֆնական Պատմութեանց Մու-

զէումը» և նկարագրէ ինձ թէ ինչեր կան այն տեղ: Նա իսկոյն գնում է Լոնդոն եւ մուզէումը, նախ նկարագրում շինութեան արտաքինը, մտնում է դռնից ներս և տեսնում Գարվինի մարմարեայ արձանը սանդուխների վրայ դրած. մտնում է միներալների և այլ բաժանմունքները և ճշտութեամբ նկարագրում: Պահանջում եմ դուրս գալ շինութիւնից և գնալ «Գեղարուեստից Մուզէումը»- նա ճշտութեամբ գտնում և մանրամասն նկարագրում է այդ տեսնում է Ուեստմինստրի աբբէն Բիկոնսֆիլդի արձանը, պարլամենտի շինութիւնը, Ալբերտի արձանը և բոլոր ճշտութեամբ պատմում: Ապա նրան ուղարկում եմ Նիւ-Եօրկ և լետոյ Ուստըր քաղաքը: Պահանջում եմ այդ քաղաքում գտնել իմ բարեկամ Մինաս Սարոյեանին. «ճէ, ասում է, նա քաղաքում չի ապրում, նա ագարակ ունի և ագարակումն է» և ճշտութեամբ նկարագրում է նրա դիմագրութիւնը տեսնում է նրա կնոջը և երեխաներին, նկարագրում է, թէ ինչպէս են մշակում հողը ամերիկացի բանուոր պատանիները եւ այլն:

Պ. Գ. Ն. ոչ Լոնդոն և ոչ Ամերիկա է եղել: Ներկաներիս պ. Յ. Ղ. խնդրեց իր առողջութեան մասին հարցնել. (նա թեթեւ ըէօսատիսմ ունէր) պ. Գ. Ն. ասաց, որ այն, նա թեթեւ ըէօմատիսմ ունի եւ պէտք է մածել: Պ. Յ. Ղ. իմ ականջին հազիւ լսելի ձայնով ասաց, որ հարցնեն, թէ ով է մածելու, ինքը թէ ուրիշը ես պահանջում եմ պ. Գ. Ն.-ից իմանալ թէ ինչ է ասում այս Յ. Ղ. նա պատասխանեց «ողջ մէկ է, կամ ինքը կամ թէ ուրիշը, միայն հարկաւոր է մածել»: Դարձեալ պ. Յ. Ղ. մտքում մտածեց թէ որ ժամանակ պիտի մածել, ես պահանջեցի պ. Գ. Ն.-ից իմանալ եւ պատասխանել ասաց «երեկոյները, քնելուց առաջ»: Այս օրինակները, կարծում եմ բաւական ցերկախօս են ապացուցանելու, որ տեղեկատրին իրականութիւն է, թէև հիպնոսական Փենոմենայի մէջ ամենից աւելի անբացատրելի: Թէ մտրդկային միտքն ընդունակ է ընդունելու ուրիշների մտածածները, դա փաստ է, բաց թէ ինչպէս է կատարւում դա, բացատրել չենք կարող: Մենք տեսնում ենք արդիւնքը եւ հաւատում... Հիպ. բժիշկ Յ. Պ. Շ.

Յ. Գ. Դեռ յօդուածս պոստին չըջանձնած, նոր պոստը բերեց «Times», որից ես թարգմանում եմ հետեւեալ տողերը:
«Times»-ի մասնաւոր թղթակիրը John E. Watkins յուլիսի 7 ին վա-
չինգտոնից գրում է.

«Society for Psychical Research»-ի (Հոգեբանական Խուզարկու-
լնկերութիւն) անդամներն այստեղ փորձեր են կատարում առանց
թելի հեռագրի ապարատի վրայ եւ ցոյց են տալիս աւելի ֆենո-
մենալ արդիւնք, քան թէ ըստացուած էր Մարկոնիինի և նրա կեղ-
ծողների սխտեմով: Այս գիտնականները պատգամներ են ուղարկում
եւ պատասխան ստանում երկրի լայն տարածութեան վրայ, և այս
փորձերը տալիս են աւելի պակաս սխալներ, քան հանդիպում էր
խտալացի հնարիչն իւր սակղբնական փորձերի միջոցին: Նրանք
գործ են ածում փոխանձող գործիքներ մետաղից և փայտից պատրաս-
տուած: Ուղարկում են հատ- հատ տառեր, բառեր և գեոմետրիական
գծեր: Նրանց սխտեմով մի մեծ խնայողութիւն ակներև է: Էլէկ-
տրականութիւնը բացարձակ փոխանակած է մտքի կենդանացման հոգը:

Նրանք, որ այս փորձերին անձամբ ներկայ չեն եղել, թերևս
այս ձեռնարկութիւնը նրանց համար ցնորական երևի. քայց այս
ժրաջան գիտնականների գուշակութիւնը հաստատ է: Սըր Ուիլիամ
Կրուքս, բրիտանական քիմիկոսների իշխանց, որն անդամ է Ռոյալ
Սոսայիդիի, եւ հնարիչ Ռէօնտգիւնի ճառագայթաչափի (radiometer),
Society for Psychical Research-ի նախկին նախագահի հետ նորերս
ուհեցած մի խօսակցութեան ժամանակ լալտնեց, թէ շուտով մարդիկ
աւելի գործնական պիտի դոնեն հեռագրել առանց թելերի, պար-
զապէս փոխանցելով խորհուրդներ մի մտքից մէկ ուրիշ միտք,
մտածողի կամքի ուժով:

Խօսքի փոխանցուած 200 մղոն հեռաւորութեան վրայ.— Փորձերի
ժամանակ 200 մղոն տարածութեան վրայ նախադասութիւններ էին
ուղարկուած, և այդ փորձերում սչ միայն մտադրուած խորհուրդը
փոխանցուեց, այլև ուղարկողի մաքում դիպուածաբար սպրդող ու-
րիշ մտածումներ էլ փոխանցուած էին ընդունողի մտքի մէջ, մտա-
դրուած պատգամների հետ: Փոխանցուած նախադասութիւնները
ստացուել են լսելի կերպով, ինչպէս, եթէ ընդունողի սենեակում
խօսած չինէին:

Ուրիշ անսակ փորձեր էլ կատարուեցին մի ընդունողի և բազ-
մաթիւ փոխանցողների հետ. վերջինները նստան մի կլոր սեղանի

շուրջը և իրենց մտքերը կեդրոնացրին սեղանի վրայ դրուած մի
առարկայի վրայ: Այս ձևի մի փորձում բաց արած դրել էին ծա-
լուող տեսակի մի փոքրիկ խոշորացուց. ընդունողն ասաց «սե է»,
«կլոր է», թափանցիկ է»: Յետոյ ապակին դրուեց դէպի լոյսը, և
ընդունողն ասաց «փայլուն է»: Միաժամանակ մի քանի փոխան-
ցողների և մի ընդունողի հետ կատարեցին և ուրիշ փորձեր: Փո-
խանցողներն իրենց բերանն էին դնում աղ, շաքար, քացախ և
ալլն. աղի համը այնքան կենդանի էր ընդունողի մտքում, որ նա
չրի պահանջ զգաց բերանն ողողելու համար:

Յ. Պ. Ծ.



V. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

Ա) ԱՐԵՎԱԿԵԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐԸ.

Տիեզերքի մի անկիւնում առանձնացած է մեր արեգակնային համակարգութիւնը, որ բաղկացած է արեւից, մոլորակներից և ուրիշ երկնային մարմիններից, որոնք պտտւում են արեւի և մոլորակների շուրջը:

Արեւը գտնւում է մեր արեգակնային համակարգութեան կենտրոնում: Նա մի վիթխարի, 4 միլիոն վերստից աւելի շրջապատ, 324 հազար երկազնդերի չափ ծանրութիւն ունեցող մի հրեղէն գունդ է, որը պտտւում է միայն իւր առանցքի շուրջը 25 օր 5 ժամ և 38 րոպէսում:

Արեգակնային համակարգութեան միւս բոլոր մարմինները իրենց լոյսը ստանում են արեւից:

Մոլորակները այն գնդերն են, որոնք պտտւում են արեւի շուրջը: Մինչև այժմ յայտնի են 8 մոլորակներ:

Բ) ԱՐԵՎԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

1904 թ. Երկու անգամ արեւի խաւարում տեղի կունենայ, որոնցից 1) Արեւի մասնաօր խաւարում 4-ին մարտի. սկիզբը 5 ժ. 37 ր. վերջը՝ 11 ժ. 45 ր. առաւ.

2) Արեւի (լիակատար) խաւարում 8-ին Սեպտեմբերի. սկիզբը 10 ժ. 3 ր. վերջը 9 ժ. 51 ր. առաւ.

Այս խաւարումներէց ոչ մինը չի տեսնուի Կովկասում: Իսկ լուսնի խաւարումն այս տարի չէի լինելու:

VI. ՕՂԵՐԵԻՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

1904 թ. էֆիմէրտէի գուշակութիւնը:

Առաջիկայ 1904 թ. Զմեռն սկզբումը անձրևային, մէջը բարեխառն, վերջը խոնաւ Գարունը խառն հիւանդութիւններով: Սմառը զարնան նման: Աշունը խոնաւ և սկզբումը հիւանդութիւն: Ձէյթուն բաւականաչափ, միայն միան ու քթանն թանգը Տարիս չղի կանանց համար կասկածելի է:

Նւ այն պատճառով որ այս տարի արեւը Հրատի հետ գտնվում է երկնքի տասններկու տանն, գորանով գուշակւում է. որ այլազղի թողաւորներից մինն արիննահեզ կտորածներով իւր զօրքով թշնամիներից սաստիկ կնեղուի

և գուցէ հենց նրանցից իւր կեանքին վերջ դնուի: Հրատի Լուսնիթային քառանկունի նալուածքովը ևս նախատեսւում է սաստիկ պատերազմներ, թաւաւորների սպանում է վտանգ և հպատակների իրանց թաղաւորներից նեղութիւն, վէճ, խռովութիւն. ծաղիկ հիւանդութիւն և վաճառականութեան անկում:

Իսկ Տանուտէրն Խեցգետինն լինելովը աշունն երկար, բայց ցուրտ: Գարնանը սաստիկ քամիներ լինելու պատճառով պտուղները կվիչանան և գինին էլ սակաւ է լինելու: Անասնոց կերը (ալաիը) քիչ և տեղ տեղ մորեխ: զօրքով թշնամիներից սաստիկ կնեղուի

Սուր լեզուն—պարզ է, երկար լեզուն պատիժ:
 —Փոքրիկ երկչոտութիւնը վիշաքնում է մեծ գործերը:
 —Ոչ իբրև երկտասարդ ենք սպրում և ոչ էլ իբրև ծեր մեռնում:
 —Հացը մարմնի կերակուրն է, իսկ խօսքը—հոգու:
 —Քախտաւորութիւնը աշխատասիրութեան ստրուկն է:
 —Մարբոր շորով կեղտոտ հոգին չի ծածկուել:
 —Միայն անմիտը կարող է ձմարիտ երջանիկ լինել:
 —Քարեկամի օգնութիւնը մեղ անելի թանգ արժէ, քան թշնամու արգելքը:
 —Քոլոր վալլի գաղանների մէջ ամենավտանգաւորը մարդն է:

—Անոջ լեզուն աւաղակի հրացանից վտանգաւոր է:
 —Ժամանակը ձեռքից մի փակցնիլ:
 —Այսօրուայ հանուբը վաղուան մի զցել:
 —Հարստութիւնը, առողջութիւնն ու հանգիստը—մի ամբողջ թաղաւորութիւն արժէն:
 —Գոռող կնոջ ոտքը կը սայթաքի, որովհետև նա չի կարող տեսնել, թէ ինչ կայ իւր ճանապարհին:
 —Սի չիշեցնէք այն մարդուն իւր ծագումը, եթէ նա այդ մոռացել է:
 —Անձնասէրներին մի շնորհաւորէք:
 —Միշտ յարգիր լռակեաց կնոջը, որովհետև այդպիսի կնոջ իմաստութիւնը մեծ է:

ԱՆԹԵՐԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

Մի բանաստեղծի կարծիքով ամենագեղեցիկ կինը պիտի ունենայ հետևեալ յատկութիւնները.

1. Երեք բան ճերմակ.—Մարմինը, ատամները և ձեռքերը:
2. Երեք բան սև.—Աչքերը, յոնքերը և արտևանունքը:
3. Երեք բան կարմիր.—Շրթունքները, այտերը և եղունգները:
4. Երեք բան երկար.—Հասակը, մազերն ու ձեռքերը:
5. Երեք բան կարճ.—Ատամները, ականջները և ոտքերը:
6. Երեք բան լայն.—Իրանը, ճակատը և յոնքերի մէջ տեղը:
7. Երեք բան նեղ.—Յերանը, մէջքը և ոտների պարանոցը:
8. Երեք բան նուրբ.—Մաղերը, մատները և շրթունքները:

ԶԻՆԱՆԱՆ ԱՌԱՅՆՆԵՐ ԿՆՈՋ ՄԱՍԻՆ,
 —Մի վտահիլ այն կնոջը, որ անելի իւր մասին է մտածում, քան մի ուրիշի. այդպիսի կնոջ սրտում դուրս տեղ չունի:
 —Անդաւակ կինը որքան էլ հարուստ չլինի, այնուամենայնիւ դեռ նրան պահասում է դոհարներից ամենաթանկագինը:
 —Լսիր այն կնոջ խօսքերին, որ դաւակներ ունի, որովհետև նա նուիրական ճանապարհից է ընթանում և կարօտ չէ սիրոյ:
 —Եթէ կինը ձեզ ատում է, նշանակում է նա սիրել է ձեզ, կամ սիրում է կամ պիտի ջարհէ:
 —Վանանց հետ մի վիճիր,—գուրջժամավաճառութիւն է:

ԱՆԻՆՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԶԱՐԲԱՆԱԿԻ ՄԻՋՈՑ.

Մի անդրիացի բժիշկ հետևեալ խորհուրդն է տալիս անքնութեան դէմ. ուղիղ պարկերով անկողնու վերայ, աջ ձեռքը հարկաւոր է դնել ճակատին. իսկ ձախը ծոծրակի տակը և հանդարտ համարել մինչև 50: Այդ գործողութեան լաւ ներգործութիւնը բացատրում է հետևեալ կերպով. աջ ձեռքի արգական մագնիսական բեռն է, իսկ ձախ ձեռքի արգ բացասական բեռնը: Այդ տեսակ կարգաւորելով արեւը մարդու կազմուածքի մէջ, ստացում է մի կազմակերպութեամբ երկկողման հոսանք. որը ազդեցութիւն ունի մեր կազմութեան վերայ. մարդ զգում է հոգեկան և մտաւոր հանգստութիւն, որին հետևում է քունը:

ԴԵՂԵՑԿՈՒՑ

Այս հիւանդութեան ժամանակ մարմինը ամբողջ դեղին գոյն է ստանում. շատ լաւ նշմարւում է աչքերի և եղունգների վերայ: Սովորաբար այս հիւանդութիւնը անցնում է ինքն իրան 2—3 շաբաթուաչ ընթացքում: Եթէ հիւանդութիւնը սկսում է տաքութիւնով և ունենում է ցնցումներ, դեղ տալ (զառանցել) պէտք է ենթադրել, որ վտանգաւոր է: Յաճախ այս հիւանդութիւնը առաջ է գալիս բարկութիւնից, վախից և կամ լեզի անկանոն գործունէութիւնից:

Բժշկելու համար հարկաւոր է թեթև լուծողական, տաք լողարան (վաննա) կամ բաղանջում երկար լողանալ կաշու գործունէութիւնը զրգուելու համար: Անհրաժեշտ է տալ միզաքեր դեղեր. լաւ միզարեր դեղ է զինոլ պտուղը (МОЖЕВЕЛЬНАЯ ЯГОДА) 2—3 հացի զգալ 2 1/2 բաժակ ջուր եփել և օրական մի քանի փնջան խմացնել: Ծանր դէպքերում անհրաժեշտ է բժշկի օգնութիւնը:

ԿԱՏԱՂԱԾ ԳԱԶԱՆՆԵՐԻ ԿԻՄԱՆԸ

Անմիջապէս հարկաւոր է ամուր կապել վերքից քիչ վերև և վերքի միջից արիւնը դուրս քաշել բանկայով (բաժակը դնել վերքի վերայ և սակից մի թուղթ վառել) և աշխատել, որքան կարելի է արիւն շատ հոսեցնել: Կարելի է շրթունքներով էլ ձծել վերքից թոնաւոր արիւնը, միայն եթէ ձծողի շրթունքների և լեզուի վերայ վերքեր չկան: Արիւնը դո րս քաշելուց լետու, վէրքը լւանալ աղի ջրով և այրել վէրքը որևէ արիւն միջոցով—կարբօլեան թըթուտով (КАРБОЛОВАЯ КИСЛОТА) դժոխաքարով (լեապիս) տաքացրած երկաթով, թունդ արաղով, նաշադիրի սպիրտով, որը ձեռաց պատրաստի դտնուի: Այստեղ ևս անհրաժեշտ է բժշկի օգնութիւնը:

IX. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՏՍ.Ք. ԼՈՂԱՐԱՆ (ՎԱՆՆԱ),

Տաք լողարանները ունին երկու տեսակ նշանակություն, 1) տաք ջուրը աւելի լաւ է մաքրում կաշին, քան սառը ջուրը, և 2) զօրեղացնում է նրա զորածունէութիւնը, արիւնը դէպի կաշին հոսեցնելու պատճառով: Սակայն տաք վաննա ընդունելով, սապօնի զործածութիւնը աւելորդ չպէտք է համարել: Վաննաները հանգստացուցիչ կերպով են ազդում, որովհետեւ նրանք ստիպում են արեանը ներքին զործարաններից հոսել դէպի մարմնի արտաքին մակերևութիւր: Տաք վաննաներ շարաթական մէկ անգամից աւել չպէտք է ընդունել. նրա մէջ պէտք է մնալ 25—30 րոպէից ոչ աւել:

ՈՒՏԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ:

- 1) Հնար եղածի չափ աշխատել որոշ ժամերին ուտել:
- 2) Ուտել որքան կարելի է զանդաղ և ամեն մի բրդունը լաւ ծամելուց չետոյ:
- 3) Տաքից առաջ կամ լետոյ սառը բան չխմել:

4) Կերածը մարսելու համար պէտք է միջոց տալ 3—4 ժամ:

5) ձաշելուց չետոյ ուտել մի քիչ հացի կեղև. դա կօզնէ մարսողութեանը և կմաքրէ ատամները անհամեմատ աւելի լաւ, քան բոլոր ատամնախոշիները:

6) Երբէք սեղան չնստել վատ տրամադրութեամբ, կամ լօղնած:

7) Խոտափել սեղանի վրայ կարգալուց կամ ընդհանրապէս մտաւոր զբաղմունքից:

8) Ուտելու ժամանակ խոտափել վիճարանութիւններից:

ԼԱԻ ԳԱՐՅՈՒՐ.— Լաւ դարեջուրը լիւնելու է բոլորովին թափանցիկ, կանգնելու ժամանակ տկուցք և մքլած կամ թթուած համ չպէտք է ունենայ. պէտք է լինի քիչ մածուցիկ և ոչ ջրալի, նոյնպէս և պէտք է ունենայ սպիտակ, մանրափամփուշտ փրփուր, (ինչպէս սերը), որը խելոյն չպէտք է անհետանայ, այլ երկար ժամանակ մնայ մակերևութի և ամանի պատերի վերայ:

X. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԹԻՍԻ ՏԱԿ ԳՆԵԼՈՒ ԶՈՒԱՆՆԵՐԻ ՃԱՆԱԶԵԼԸ

Թուխների տակը ձուն դնելուց առաջ պէտք է քննել, թէ նա պէտքական է արդե՞օք այդ նպատակի համար: Չուտելը քննելու համար վերցնում են մի կարգոն—մի երեսը սև ներկած—և նրա մէջ տեղը ձուի մեծութեամբ կտրում են մի ձուածև բացուածք: Չուն դնում են այդ բացուածքի մէջ և սև կողմը դէպի քննողը դարձնելով բռնում են կրակի դէմը: Եթէ ձուն հաստար թափանցիկ է և միայն բութ կողմից նշմարում է մի կտոր օդով լցուած տեղ, կնշանակէ ձուն լաւ է և պէտքական է Թխսի տակը դնելու համար:

Թխսի տակը դրած ձուերը, եթէ 5 օրից լետոյ անխոփոխ մնացին, նրանց պէտք է հեռացնել—նրանք անպէտք են. իսկ եթէ ընդհակառակը, հինգ օրից լետոյ ձուի մէջ նրա երկարութեամբ երևաց ստուերի երկար շերտ, մի կողմից դէպի միւր շարժուող մութ կէտով, այդ նշանակում է ձուն բեղմնաւորուած է և ամեն բան կարգին:

ԱՂԻ ԵՒ ԶՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՅՆՎԱՆՆԵՐԻ ԿՅՐԻ ՄԵՋ.

Աղը օգնում է մարսողութեանը և

պահպանում կենդանու առողջութիւնը: Կենդանիներին պէտք է տալ աղը որոշեալ չափով՝ ոչխարներին և խոզերին, օրական 1—2 մսխալ, եղջիւրատար կենդանիներին 3—7 մսխալ, իսկ ձիերին 1 1/2—3 1/2 մսխալ: Աւելի լաւ է աղը լուծել ջրում և նրանով սրակել կենդանու կերը (կտրմբ): Չահիլ և ծեր կենդանիները աւելի պէտք ունին աղի, քան միջին հասակ ունեցողները:

Ի՞նչօրէս ձԱՆԱԶԵԼ ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԸ.

Շատ կաթ են տալիս այն կովերը, որոնք

- ա) թեթև կմախք ունին,
- բ) բարակ կաշի,
- գ) մեծաղիւ մարսողական խոռոչ, և
- դ) եթէ նրա մէջ ճարպային շերտն ու մկանունքները լաւ են դարգացած:

ԹԵ Ի՞ՆՉՕՐԵՑ ՊԵՏԵ ԻՄԱՆԱԿ ԿԱԹԻ ՏԱՏ-ԿՈՒԹՈՒՆՆԵՐ.

Կովի սրբանոցի, ածուկների և ծծերի մաղերը շփելիս, եթէ երևում են այդ տեղերում իւղոտ, թեփ, այդ կովի կաթը խղոտ կլինի և որքան առատ է թեփը, այնքան էլ խղալի է կաթը:

XI. ՏԱՆՏԻԿԻՆ


ԽՄԵԼՈՒ ԼՍԻ ԶՈՒՐ: Լաւ ջուրը պէտք է լինի բոլորովին թափանցիկ, անդուշ, առանց հոտի և երկար միտեղ մնալուց չետոյ, նստուածք չպէտք է ունենայ: Անպայման փաստակար է խմելու համար այն ջուրը, որի մէջ դտնուում են լուծուող կենդանիներ և բոյսեր, այդ մենք կարող ենք իմանալ նրա վատ, հոտած համից: Այդպիսի վատ չտակութիւն ունին նաւթալին և ճահճալին հողի միջից հոսող, նոյնպէս և այն ջրանցքների ջրերը, որոնք անցկացրած են տներից կեղտոտ ջրեր ասանող խողովակների մօտով:

ԽՈՀԱՆՈՅՑ ԵՄԱՆՆԵՐԻ ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ
Պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել ընդհանրապէս ամանների մաքրութեան և մանաւանդ պղնձեայ ամանների կլայէկի ամբողջութեան վրայ, որովհետեւ շատ դէպքերում նրանից թոյնը ընդունում է աննշան քանա-

կութեամբ և ընտանիքի անդամների, կամ հասարակաց սեղանատներում կերակրողները վատառողջութեան պատճառը, լաճախ չեն կասկածում, որ թունատրելուց է: Լզարելը, ջղալին ցնցումները, մորթի դեղնութիւնը, շնչառութեան դժուարանալը, ախորձակի բացակայութիւնը և ստամոքսալին խիթերը շատ անգամ փաստակար ամաններից կերակրելու հետևանքներ են:

ԵՄԱՂԻԿՆԵՐԸ ԶՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շատ օգտակար է ամառը ծաղիկները ջրել այն ջրով, որի մէջ լուացել են միսը, նոյնպէս և աղբի ջրով: Իսկ ձմեռը և ցուրտ եղանակներին, մանաւանդ տրոպիքական բոյսերը չպէտք է ջրել սառը ջրով, այլ այնպիսի ջրով, որ մնացել է սառք սենեակում մի քանի ժամ:



XII. Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

ՋՐՀՈՐՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԼՍԻ ՄԻՋՈՑ
Վերցնել 20 կտոր իրայտի, լաւ աչրուած, ծակոտիէն ածուխ 5 գրվ. հասարակ աղ, և մի կապոց կազմել: Այդպիսի երեք կապոցներ պատրաստելուց չետոյ, բոլորն էլ իջեցնել ջրհորի յատակը, միմիանցից հեռու: Երեք օրից չետոյ ջուրը կմաքրուի և կլինի թափանցիկ ու համեղ: Այս միջոցը պէտք է կրկնել տարեկան 3-4 անգամ, մանաւանդ զարնանը: Աղը պէտք է գործածել տարեկան մի, կամ ամենաշատը, երկու անգամ: Ծանրութեան համար կապոցների տակից աղիւս են կապում:

ՃԱՐՊԻ ԲԵՆԵՐԻ ՀՄԵԼՈՒ ՀՆԱՐԲ:
Ճարպի բծերը շորի վրայից հանելու համար հարկատր է ամենալաւ կարտօֆիլի ալիւրը խառնել ջրի հետ, քսել կեղտոտ տեղերի վրայ և թողնել չորանալու: Մաքրելուց չետոյ բոլոր բծերը կանչեւտանան:

ԽԱԼԻԶԱՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ԿՆՐՊԸ:
Խալիչաները և հատարակ կտորները իրայտին բծերից մաքրելու համար պէտք է վերցնել գածի փոշի, և ցանել բծերի վերայ: մի օր թողնելուց չետոյ նրանց պէտք է փոխել և այդպիսով մի քանի օրից բիծը կմաքրուի:

ԿԱԹԻ ԹԹՈՒՆԵԼՈՒ ԴԵՄ ՄԻՋՈՑ:
Կաթը թթուելուց պահպանելու համար ամառը, մի շիշ կաթի մէջ պէտք է լցնել մի թէչի գղալ մանրացրած շաքար, կամ կէս թէչի գղալ սօղալի փոշի, վերջին դէպքում կաթը աւելի

երկար է պահուում, իսկ առաջին դէպքում, նա շատ լաւ է համը պահպանում:

ԱՐԾԱԹԵԱՑ ԱՆՈԹՆԵՐԸ ՄԱՔՐԵԼՈՒ ԼՍԻ ՄԻՋՈՑ.— Արծաթեայ անօթները (կաթասոյ, դղալ, պատասաքաղ և այլն) կարելի է մաքրել հետևեալ կերպով վերցնել:

Գինու քար 2 մօխալ (դեղատնից)
Շիպ » 9 »
Հասարակ աղ 9 » լուծել այդ բոլորը 7 բաժակ ջրի մէջ, լաւ եփել և նրա մէջը կոխել մաքրելիք առարկաները: Դուրս հանելուց չետոյ սրբել մաքուր ջրով:

ԽԱԼԻԶԱՆԵՐԸ ՅԵՑԻՑ ՊԱՇՏՊԱՆՆԵԼՈՒ ՀՄԱՐ:— Նրանց վրայ փռել թաց, աւելի ճիշտ ասած, խոնաւ սաւան և այդ սաւանի վրայով տանել-բերել տաք հարթուկը (ԿՐՈՒՄԵ): Այդպիսի գոյացած տաք գոլորշին կը թափանցէ խալիչալի ներսը և կը սպանէ բոլոր միջատներին և նրանց ձուերին:

ԲՐԻԼԻԱՆՈՒ ՔԱՐԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԱՔՐԵԼ ԵՆՂԱՊՐԻ ՍԱԼԻՐԱՍՈՎ:
Թէ ԻՆՉՊԵՍ ՐԵՋԻՆԷ ԿՐԿԵԱԿՕՇԵԿՆԵՐԻՆ ՊԵՏՔ Է ԿԱՇԻ (ՊԱԳՕՇԵՆԵՐ) ԿՊՑՆԵԼ:

Հին կրկնակօշիկներից կտրատել 6-8 մաս բեղինի կտորներ և լցնել 100 մաս բենզինի մէջ, Երբ բեղինի կտորները բոլորովին կը լուծուին նրա մէջ, այդ խառնուրդով կարելի է պաղօշնները կայցնել կրկնակօշիկների տակը:

XIII. ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մագիստրինէ անունով մի իտալուհի, որ ազդում էր Նէպոլի մօտ մի գիւղում, իւր 19 տարուայ ամուսնութեան ընթացքում լոյս աշխարհ է հանել ուղիղ վաթսուն և երկու երեխայ, դրանցից 59 տղայ էր իսկ երեքը աղջիկ: Սկսած իւր 19 տարեկան հասակից տասնևեկ անգամ շարունակ Մագիստրինէն ծնում էր երեխայ երեքը միասին, իսկ այնուհետև սկսեց ծնել շորսը միտսին. մի անգամ էլ նա ծնել է հինգ տղայ և մի աղջիկ զարձեալ միաստեղ: Այդ ժամութեան այս դէպքը, ինչպէս պատմում են, աշխարհիս երեսին գրէթէ առաջին օրինակն է: Այժմ Մագիստրինէն 57 տարեկան է և արդէն ուժերը սպառուել են, այնպէս որ բանել անգամ չի կարողանում: Սմբողջ երկու հազար մարդ վկայում է և հաստատում է այս տարօրինակ դէպքի և այդ հերոս կնոջ մասին, որ արդէն խնդրամատուց է եղել պատշաճաւոր կառավարութեան, որ իրեն կենսաթօշակ նշանակուի տարեկան 1800 ֆրանկ:

Անգլիական լրագրները պատմում են մի սովորականից շատ երկար մօրուք

ունեցող մարդու մասին: Շոտլանդացի միտներ Ալէքսանդր Ուիլկի, որի հասակն է 5 րոտնաչափ, ունի 7 սոտնաչափ և 2 1/2 մատնաչափ երկարութեամբ մօրուք: Այսինքն մօրուքը համարեա թէ մէկ ու կէս անգամ երկար է տիրոջից: Մինչև 25 տարեկան դառնալը միտներ Ուիլկիի մօրուքը բնում էր սովորական կերպով և միայն դրանից լետուց, չանկարծ, սկսեց անասելի արագ աճել: Միտներ Ուիլկիի—հողատէր է և հիանալի հրացանածիդ, որպէս զի մօրուքը նրան չխանդարի մանգալու ժամանակ, նա ծալծում է այն և դնում վերնազգեստի տակ:

Մամբրիկայի հանրածանօթ միլիոնատէր Կարնեզինը Նիւ-Իօրկում մի տուն է շինել տուել, որի վրայ ծախսել է 4.725.000 ր.: Միլիոնատէրն անցեալ դեկտ. 25-ին, որպէս Ծննդեան տօնի նուէր, այդ տունը նուիրել է իւր աղջկանը:

XIV. ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Քահանան երազում տեսնում է, որ մէկը «ժամոց» է տալիս. ուստի քնի մէջ սկսեց բարձր ձայնով պահպանիչ ասել: Երեցկինը վախենալով. արթնացրեց նրան:

—Անիծա՛ծ, ասաց քահանան արթնանալով, չէի՞ր կարող համբերել որ ժամոցս առնէի չետոյ զարթեցնէիր:

Եթէ քիմիագէտը, վորձի համար, մի որ և է կին տարբալուծէր, հետեալ արդիւնքը պիտի գտնէր.

Արտասուք	20 մաս
Վուղը-կրէմ	10 »
Գոռոզութիւն	10 »
Օ-դը-կոյօն	9 »
Նախանձ	15 »
Լաւանտա	7 »
Ուղեղ	1 »
Կարմիր ներկ	4 »
Սալոր	8 »
Բամբաստանք	12 »
Պարսպ խօսքեր	4 »

100

Մի անգամ Նասրէզդին խօճան վաճառանոցը պտտելու ժամանակ, մի մարդ մօտեցաւ նրան և հարցրեց.

—Այսօր լուսնի 3-ն է՞, թէ 4.
—Չգիտեմ, պարտախանեց խօճան, ոչ առել եմ, ոչ ծախել:


Հարսը ծուլութեան պատճառով աղբիւրից ջուր բերելու էր գնում: Մի առաւօտ կեսուրն ու սկեսարը ջրի կուժը իրար ձեռքից քաշում էին. կինը ասում էր ես պիտի գնամ ջուրը, մարդը ասում էր, չէ՛, ես պիտի գնամ, թերևս հարսը ամաչի ու ինքը կուժն առնէ գնալ ջուրը: Սակայն հարսը առանց սեղից շարժուելու ասաց.

—Մնչ էք իրար սեխ կրծոտում, չոփ քցեցէ՛ք—(վիճակ) ձեզնից մէկը թող առաւօտը գնալ ջրի, միսը իրիկունը:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՕՐԻՈՐԴ

—Նա ձեղ սիրում եմ և չգիտեմ թէ ի՞նչ անեմ, որ ինձ լսէք.
—Լսողը ականջներս են, կաշառեցէք նրանց:
—Բայց ինչո՞վ:
—Շողակնեալ օղբերով:

ԲԱՂԴԱԳՈՒԹԱԿ *)



*) Հետեւեալ XII բաժանմունքների հարեցրից ամեն միւր, ցանկացողներն իրանց մտքումս պահում են և դեպակը գցում են վերը նշանակուած շրջանի մէջ տեղը: Իսկ պատասխանը պէտք է դընդակի տակի թուերս մէջ փնտուել:

Բաղդաւոր կը լինիմ արդե՞օր

1. Այո, կը լինես, բայց ծոյլ ես:
2. Որ չես աշխատում՝ ինչ կը լինես:
3. Եթէ առաւօտները վաղ դարձնես:
4. Գործիւք արի եղիք միայն:
5. Եթէ այդ ուրիշին ևս ցանկանաս:
6. Խնայողութիւն չունես:
7. Այնպէս չես վարուում որ լինես:
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես:
9. Որդ կերանցով՝ ճեր ժամանակը:
10. Ամենքի հետ մի վարուում, կոչնչանաս, այդպէս մի շարունակի:
11. Բողոքը բնաւորութեան մէջն է:
12. Խոնարհութեամբ միայն կարող ես բարտաւոր լինել:

II. Յաջողութիւն կունենամ

1. Միայն ճարպիկ և հեռատես եղիք:
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես:
3. Եթէ աղէիւ և չափաւոր լինես:
4. Կանանց միջոցով ամեն բանի կը հասնես:
5. Եթէ թողնես լիմարութիւններդ:
6. Բոլորը՝ քեզանից է կախուած:
7. Միայն ամուսնացուող ըուստ պէտք է լինի, թէ կուղ տարիքը 60-ից էլ անց:
8. Եթէ եռանդով գործես:
9. Առանց այն էլ ինքք լաւ կաս:
10. Սյնպէս, ինչպէս ինքք ցանկանաս:
11. Ցանածդ դուրս կը դալ, ծլածդ կը ծաղկի:
12. Ամեն բանում յաջողութիւն կը գտնես, բայց կանանցից կարգին տանը ունիւ ես:

III. Իմ իղէալս սիրո՞ւմ է ինձ արդեօր

1. Նայի՛ր հայելուն, տես արդ եօք կաբելի՞ է քեզ սիրել:
2. Սիրում է, բայց ծածկում է,
3. Չի էլ մտածում այդ մասին:
4. Բայց քեզ հետ ուրիշներին էլ է սիրում:
5. Նայելով թէ ի՞նչ ես բնծայելու:
6. Չե՞ն ամաչում, ի՞նչ քո սիրելուդ ժամանակն է:
7. Սիրում է և կսիրի միայն թէ մինչև քո կարողութեան վերջին կողմից:
8. Քեզ շատ սիրելուց տանջում է:
9. Միայն քանի որ անսնում է քեզ:
10. Շատ քիչ:
11. Սիրում է քեզ միայն երբ լեքն է գրգանդ:
12. Ոչ սիրում է, ոչ ատում, այլ միմի անգամ միայն դուր ես դալիս:

IV. Շուտ կը լինի արդե՞օր իմ հարսանիքը

1. Երբէք, եթէ վերջդ չմտածես:
2. Երբ քո քեզին է, միայն զգուշացիք:
3. Ո՛ւմն ես պէտք, կամ ո՛ւմն ինչ:
4. Մինչև քեզ չապստովես:
5. Երբ բարեկամ գտնես:
6. Երբ խելօքանաս:
7. Շատ ուշ ես մտածում:
8. Որ միտք չունես՝ լաւ է մի վանք մտնես:
9. Շուտ, հէնց այս տարի, բայց չես աշխատում:
10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր:
11. Դու լաւ դեմես թէ երբ:
12. Դատարի դրսամով ի՞նչ հարսանիք:

V. Եկող տարի ինչպէ՞օս կը լինի

1. Դայելով թէ դու ի՞նչ կը լինես:
2. Լաւ, եթէ խելքդ դիւրեք պահես:
3. Եթէ առաջուց ատած ունենաս վիճակահանութեան տոմսի, կը տանես:
4. Ամառը շոգ՝ ձմեռը ցուրտ:
5. Հարուստների համար լաւ կը լինի:
6. Խելքիդ զուտ կը տաս, փող շատ կը ծախես:
7. Այդ վատ բնաւորութիւնդ չես փոխիլ:
8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի:
9. Աւրախ և բողոքաւոր:
10. Փողեր շատ կստանաս, շատ էլ կը ծախես, տակը բան չի մնալ:

11. Յեմաբը կաշխատի, խելօքը կուտի:
12. Ծնուածին կը մկտեն, մեռնողին կը թաղեն:

VI. Երկար կապրեմ արդե՞օր

1. Ամեն բանի մէջ չափաւոր լինելով՝ հարեւրից կանցնես:
2. Այ մի կողմից քեզ չես զսպում, ի՞նչ երկար կապրես:
3. Այնքան անգամ մէկ ու կէս, որքան ծնողքդ:
4. Եթէ պարտքեր չանես, իննսուն և իննը:
5. Անչափ աչքածակութիւնդ, կեանքդ կարճացնում է:
6. Ապրես՝ չապրես. ի՞նչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշ:
7. Ի՞նչ անգամ ինը տարի, բայց ցրտից զգուշացիք:
8. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով երկար կապրես:
9. Նախանձատ սրտովք երկար չես ապրելու:
10. Փառասիրութիւնդ է կեանքդ կարճացնում:
11. Գործք իմացիք, քեզ դեռ այդ է հարկաւոր:
12. Ձրից զգուշացիլ միայն: *)

*) Այս բաղդադուշակը գետեղում ենք որպէս պարասպ ժամանակի խաղ՝ մեր ընթերցողները համար. Ծան. Աշխ.

XV. Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն

Հասարակ պարտախոսության օրինակ
 Թիֆլիս, 1-ն Թիֆլիսի 1904 թ.
 Մուրհակ 1000 ռուբլի արծաթի
 Յուլիանի մեկին, հազար ինն հարիւր
 չորս ամի, պարտաւոր եմ վճարել
 Յիֆիլիսի 2-րդ-կարգի վաճառական
 Յովհաննէս Մաթէոսեան Վիրակոսեա
 նին հազար ութիւր արծաթ, որը ես
 նրանից լիովին ստացել եմ:
 Ս տ օ Ր ա զ Ր օ ւ թ ի ւ ն — Թիֆլիսի քա-
 ղաքացի Անտօն Պօղոսեան Նիկողոսեան:

ՌՈՒՄԱԿԱՆ ՉԱՓԵՐ

Մակերեւոյթի.

Փաստաւոր մղոնը ունի	49 քառ. վերստ
» վերստը »	250,0(0 « սաժէն
» սաժէնը »	9 » արշին
» արշինը »	256 » վերշոկ
» սաժէնը »	49 » ֆուտ
» ֆուտը »	144 » դիւլիմ
Դեսեատինը ունի	2400 » սաժէն

Բովանդակութեան չափեր.

Պորանարդ մղոնն ունի	343 խոր. վերստ
« վերստն »	125 միլ. խ. սաժ.
» սաժէնն »	27 խոր. արշին
» » »	343 » ֆուտ
» արշինն »	4096 » վերշ.
» ֆուտը »	1728 » դիւլիմ
» արշինն »	21,925 » »
» սաժէնն »	110,592 խ. վերշ.

592,704 խոր. դիւլիմ. 1 միլիօն խոր.
 հարիւրերորդ սաժէնին (1 շօտ.):

Ընդդէմնների չափեր.

Հաստը ունի . . .	12 չետվերտ
Ձեռովերարը . . .	8 չետվերիկ
Ձեռովերիկը . . .	8 դարնցի
Հեղուկների չափեր.	
Տակառն ունի . . .	40 վեդրո
Վեդրօն » . . .	10 շտօֆ
» հաւասար է . . .	30 դրլ. ջրի
Շտոֆը կամ կրօժիկէն ունի	2 շիշ (բուժիկ)

Դեղատան քաշեր.

Դրուանքան ունի (84 մս.)	12 ունց
Ունցիան » . . .	8 դրախմ
Դրախման » . . .	3 սկրուպուլ
Սկրուպուլը » . . .	20 դրան
1 դրանը » . . .	1 ցորենա-քաշ:

Ք Ա Շ Ե Ր Ը

Չանապն էրիւնէրի թուէրը

